Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեն (այսուհետ Կոմիտե) հայտարարում է Կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչության միջազգային համագործակցության բաժնի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 19/1-4.1-1) քաղաքացիական ծառայության որոշակի ժամկետով թափուր պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնելու մասին

Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է գիտության բնագավառի հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակման ու քննարկման, գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղություններին համապատասխանող միջպետական համագործակցության շրջանակներում գիտատեխնիկական ծրագրերի մշակման, թարգմանության ու դրանց իրականացման, մասնակցում է միջազգային պայմանագրերի ու համաձայնագրերի շրջանակներում իրականացվող մրցույթների կազմակերպման և իրականացվող ծրագրերի համակարգման աշխատանքներին:

Նշված պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրովզբաղեցնելու համար պահանջվում է՝

*բարձրագույն կրթություն,

* համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Որոշակի ժամկետով թափուր պաշտոնն առաջացել է հղիության և ծննդաբերության արձակուրդի հիմքով:

Աշխատավարձի չափը կազմում է 111115 (մեկ հարյուր տասնմեկ հազար մեկ հարյուր տասնհինգ) դրամ:

Դիմող ՀՀ քաղաքացիները ԿԳՆ գիտության կոմիտե (ք. Երևան, Օրբելի եղբայրների, 22, 703 սենյակ, հեռ. 21-01-40-107) պետք է ներկայացնեն հետևալ փաստաթղթերը՝

* գրավոր դիմում (ձևը կցվում է),

* կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի)՝ պատճենները.

* աշխատանքային գրքույկի (առկայության դեպքում) պատճենը՝ բնօրինակի հետ միասին.

* արական սեռի անձինք՝ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք,

* մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.

* անձնագրի (նույնականացման քարտի) պատճենը:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 09:30-ից մինչև 12:30-ը՝ ներկայացնելով անձնագիրը (նույնականացման քարտը) կամհետևյալ էլ. փոստով՝hr@scs.am:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 05.10.2018թ.